ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02//21737-2025

mtq 29-02, 10-07-2025

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ,
ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

ՀԵՌ.՝ +37410580582
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ profrosgu@gmail.com

Հարգելի տիկին Ասատրյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունիսի 23-ի N 36-01/15 դիմումի՝ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կարևորում է Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը պաշտոնապես հանրային ծառայողի օր հռչակելու նախաձեռնությունը, որի նպատակն է ճանաչել հանրային ծառայության աշխատակիցների կողմից մատուցվող ծառայությունների արժեքը, հանրային ծառայության աշխատակիցների ներդրումը երկրի զարգացման գործընթացում, բարելավել հանրային ծառայողների ընկալումը, բարոյականությունն ու իմիջը, ճանաչելիությունը, ոգեշնչել հանրային ծառայողների շարքերը համալրող նոր սերնդին:

Այսպիսով, Քաղաքացիական ծառայության գրասենյակը պատրաստվում է հանդես գալ «Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայողի միջազգային օրը նշելու մասին» որոշման նախագծի նախաձեռնությամբ: Հարկ ենք համարում նշել նաև, որ հանրային ծառայողի օրվա հանրահռչակման վերաբերյալ որոշման նախագծի մշակումը նախատեսված է հորիզոնական միասնականություն ապահովելու, հանրային ծառայողի իրավունքների պաշտպանվածությունն առավելապես ընդգծելու, հանրային ծառայողների անփոխարինելի աշխատանքն ու ներդրումը գնահատելու, արդյունավետ հանրային ծառայություններ մատուցելու, նոր գաղափարների և արդեն իսկ ձեռքբերված փորձի

կիրառմամբ միասնական քաղաքականության մշակման գործում հանրային ծառայողների դերն ու կարևորությունը ընդգծելու համար:

Ինչ վերաբերում է հանրային ծառայողների վարձատրության մակարդակի բարձրացման հարցին, ապա պետք է նշել, որ պետական համակարգում արժանապատիվ աշխատանքի պայմանների ապահովման, այդ թվում՝ աշխատավարձի բարձրացման խնդիրները գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում: Դեռևս 2019 թվականի հունվարից պետական բոլոր մարմիններին հատկացվեցին պարգևատրման հավելյալ ֆոնդեր, որի միջոցով պետական մարմիններում բարձրացվեց աշխատավարձը:

2023 թվականի հունվարի 1-ից բարձրացվեց նաև պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը (այսուհետև՝ բազային աշխատավարձ) և սահմանվեց 83200 ՀՀ դրամ:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է բազային աշխատավարձի չափի որոշման կանոնը, այն է՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը:

Ներկայում բազային աշխատավարձը կազմում է նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսը, այսինքն՝ Օրենքի կարգավորումների համաձայն՝ բազային աշխատավարձի բարձրացումը պայմանավորված է ոչ միայն նվազագույն աշխատավարձի վերանայումով, այլև այն կարող է բարձրացվել նվազագույն աշխատավարձի գործող չափի պահպանման պայմաններում: Որպես կանոն աշխատավարձի բարձրացման ծրագրերը քննարկվում են հաշվի առնելով ոչ միայն սոցիալական պայմանները, այլև՝ երկրի ֆինանսատնտեսական հնարավորությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ՝ պետական հատվածում ֆինանսական շահադրդման համակարգի լավարկումը դիտարկվում է հանրային ծառայության գրավչության մյուս գործիքների ու բաղադրիչների հետ մեկ ամբողջության մեջ, որի շրջանակում 2025-2026 թվականներին

նախատեսված է հանրային ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համակարգի վերանայում:

Հարգանքով՝

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ստորագրող
ՀԱՅԿ ՍԻՄՈՆՅԱՆ
4105830406

2025-07-09 16:24:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝ Լիլիթ Սյունի
ՔԾԳ վերլուծության և զարգացման ծրագրերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 010515480
Էլ փոստ՝ lilit.syuni@cso.gov.am